

մէջ այգեստանեայց. եւ գնացեալ անդ վարդապետս նորոգեաց, եւ ժողովեալ բազում աշակերտս եւ կրօնաւորս եւ միայնակեացս եւ կարգեաց դպրոցս, այլ եւ բազում կարգս եւ կրօնս հաստատեաց: ...Գրեցաւ գիրքս ձեռամբ Եսայեայ սարկաւազի յերկիրն Այրարատեան, ի գաւառն Կոտա(յի)ց, ի մայրաքաղաքն Երեւան, ի դուռն սուրբ ուխտին Անանիա կոչեցեալ, առ ոտս քաջ բարունոյն Մովսէսի. որ եւ ծառայ եւ տրուպ աշակերտաց իսկ եմ, յաշխարհէն Սիսակայ, յերկրէն Գուրհամու, զեղջէն որ կոչի Կարճաւան⁸:

Առոյգ եւ առաքելաջան գործունէութեանս համբաւը շուտով տարածուեցաւ «ընդ ծագս աշխարհի»: Թուրքիայէն եւ Պարսկաստանէն եկող վաճառականները հիացմամբ կը տեսնէին վարդապետին արդիւնալից աշխատանքները եւ կ'երթային ու կը պատմէին անոր սրբակեաց անձին եւ անխոնջ գոր-

⁸ Արարատ, 1888, էջ 407—408, էջմիածնի թ. 1513, այժմ 1538 ձեռագրէն: Ալիշան, Սիսական, էջ 277, ուր կ'օղտուի յիշատակարանէս, զրիչը Երեմիա կ'անուանէ սխալմամբ: — ձիւղ այս տարին Ղազար գրիչ կ'օրինակէ Մատթէի, Ղուկասու եւ Յովհաննու մեկնութիւն մը Ռէդի թուին «ի վիճակս Ստաթէի ի յերկիրս Աճանանու ի գեաւդս Սոտանան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, ի խնդրոյ Մովսէս քաջ բարունապետին»: Զեռ. էջմ. 1878, թղ. 277 ր. իսկ թղ. 435 ա կ'ըսուի. «Արդ գրեցաւ... հրամանաւ տեառն Մովսէս կաթողիկոսի յաթոռն զերազաւ սուրբ էջմիածնի որ... զայս գիրքը զրեւ ետ եւ եղ յիշատակ ի սուրբ Աթոռն... ի թվականիս մերում Ռ. (ուրիշ գրչէ կեղծուած՝ ՌԼԳ) ամին. ձեռամբ Իսահակայ վարդապետին»: Գիրը վերնոյն հետ նոյն է: